## ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ*

10. Ղեւոնդեանց նահատակութեան տարեկան տօնախմբութեան օրը, ի յիշատակ Հօր Ալիշանի գրական գործունէութեան, տեղւոյս Ռափայէլեան վարժարանի մէջ, հանդէս մը տրուեցաւ. Ներկայ էին Ս. Ղազարու ամբողջ վանականք, և քաղքէն նշանաւոր անձինք և ընտանիք։ Երկար ու համառօտ ներբողեան ճառերէ և բանաստեղծութիւններէ զատ. վարժարանի Մեծարգոյ Տեսուչ Հ. Մինաս Վ. Նուրիխան իտալերէն լեզուով օտարաց ծանօթացուց զՀայր Ալիշան, գրուածոց անոր բանաստեղծական և գրական անզուգական գործը։ Միեւնոյն օրը վարժարանի փոքրիկ թատերաբեմին վրայ աշակերտները ներկայացուցին Յուշիկներէն առնուած Թէոդոր Ռշտունիի վէպի ողբերգութիւնը։

11. Մշոյ Մխիթարեան վարժարանը օր աւուր կը յառաջադիմէ. այժմ ունի հինգ դասարան 200 աշակերտ։ Թղթակցէ մը կ'իմանանք թէ այս տարուան Հարցաքննութեան հանդէսը յոյժ շքեղ անցած է ի ներկայութեան Նորեկ ռուս Հիւպատոսին և քաղաքի պաշտօնական անձանց։ Հանդէսը կը բացուի յատուկ երգերով. յաջորդաբար ռուս Հիւպատոսը և վարժարանի անձնանուէր և արդիւնաւոր տեսուչ Վ. Հ. Անանիա Վ. Լոնտախճեան բարեմաղթական ուղերձներ խօսեր են։ Ուրախ ենք յիշելու՝ որ Ամերիկայի Մշեցի պանդուխտները մասնախումբ մը կազմած են, — (անդամքն, Խաչիկ Պօղոսեան, Գրիգոր Պօղոսեան, Դաւիթ Մանուկեան, Ստեփան Մելքոնեան, Մխիթար Եփրեմեան, Բաղդասար Անդրիկեան, Նազարէթ Կոսյեան, Յովհաննէս Պատուհասեան, Յովհաննէս Գրիգորեան), — և նպատակնին է ամէն ամիս դրամական նպաստ հասցնել Մշոյ դպրոցին։ Փափաքելի էր որ բնագաւառի մեր միւս շատ մը անխնամ տարրական վարժարանները յիշեալ Մշեցի գաղթականներուն նման ունենային իրենց համեստ բայց անկեղծ բարերարներն։

12. Տրապիզոնի մէջ, ազգային բարեգործական հանդէսներու գնահատուած հոգի, Կոմիտաս Էֆէնտի Հէքիմեանի կազմակերպութեամբ, ի նպաստ Լուսաւորչական երկսեռ վարժարաններու, նուագահանդէս մը տրուեր է։ Ռափայէլեան վարժարանի արհեստագէտ նոր ընթացաւարտ աշակերտները, այդ հանդէսին մասնակցելով, երգեր են իտալ երաժշտութեան գեղեցիկ կտորներ։ Միայն չի գիտցուիր, թէ ի նպաստ այդ կարօտեալ վարժարանաց որքան գումար հանգանակուած է։

* Շար. տես փետրուար 1902.

**Ա. Զ. Դ.** — *Ընտանեկան գաղտնիքներ. Թարգմանութիւն Կ. ԻՒԹԻՒՃԵԱՆ Էֆ.ի։ Երեք հատոր, գին 15 ղրշ.։ Խիստ շահեկան վէպ մը, որ մեծ հաճոյքով ու հետաքրքրութեամբ կը կարդացուի։ — Կը գտնուի Պաղտատլեան գրատունն. Սուլթան Համամ թիւ 14, և գրավաճառաց քով։*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ

Ռոստովէն ազգասէր Պ. Յովհ. Պալեան «Բազմավէպ»էն և «Գեղունի»էն մի մի ձեռք նուիրած է Կիպրոսի. Զէկվէլի. Արմաշու Հայ Որբանոցներու. Դավրէժի Հայուհեաց Ընկերութեան. և Ուրմի Ջանշեան Գրադարանի։

Զմիւռնիայէն Պ. Կարապետ Եզիզլեր մի օրինակ «Բազմավէպ» և «Գեղունի» նուիրած է իր տեղւոյն Աղջ. Որբանոցին։

Մոսկ. բանասէրն Պ. Գ. Խալաթեանց մեզ կը նուիրէ «Բազմավէպ»ի չորս բաժնեգին։ Թերթերը կը յատկացընենք.

Ա. Պարտիզակի Հայ Լուսաւորչական վրժրնին։
Բ. » Ազգային Որբանոցին։
Գ. Տրապիզոնի Լուսաւորչական վարժարանին։
Դ. Կը թողունք Դավրէժի Հայուհեաց բարեգործական կրթական ընկերութեան տրամադրութեան տակ։

## ՆԱՄԱԿԱՆԻ

ԿԱԼԿԱԹԱ. — ՄԵԾ. Մ. ՍԷԹ. — Կողքերը տակաւին չեն տպուած։

ՃԵՐՈՒՍ. — Մ. ՎԱՆԱՀԱՅՐ ՏԱԹԵՒ ՎԱՆՑ. — Ստակը ընդունեցանք. նոյն է մեզի համար։

ԴԱՎՐԷԺ. — ՄԵԾ. ՏՈՔԹ. ՓԱՇԱՅԵԱՆ. — Խնդրեալ «Մխիթարը» ժամանակին յանձնարարեալ ղրկած էինք. ստացե՞ր էք, թէ ոչ։

ՇՈՒԼԱՎԷՐ. — Պ. Գ. Բ. — Յանձնեցինք տպարանի տեսչութեան. նամակ կը ստանաք։

ՌՈՍՏՈՎ. — Պ. Մ. Թ. — Յաղթանակը յարատեւողին է. առ այժմ որբին գանձանակը լումայի կաթիլներ կ'իյնան. փոյթ չէ, մենք չենք մոռնար ծանօթ առակն «Gutta cavat lapidem...» Առ այժմ շնորհակալութիւններ. նամակ ալ կը ստանաք։

ԶԻԿՎԷԼ. — ՄԵԾ. ԹՈՒՄԱՅԵԱՆ. — Կը գովենք Ձեր «Զինադուլի» գրուատելի գաղափարը. ուսակից մեկին չէ մեր խմբագրականին ոգին. կը փափաքինք «յականջս մեռելոց չլինել խօսեցեալ»։

Կ. ՊՈԼԻՍ. — Մ. Կ. Զ. — Կու գայ ժամանակը, այդ Սեւերուն դիմակներն ալ վար կ'առնուին։

ԶԻԿՎԷԼ. — «ՊԱՏԱՆԻ». — Լրագրութեան աշխոյժ Սանիկներ, շարունակեցէք Ձեր գործը. մի՛ վհատիք։ «Գեղունի»ով տարածեցինք Ձեր ղրկած պրակներն։

ԳԱՅԻՐԷ. — Պ. Բ. ՄԱՍՐՖ. — «Գեղունի»ի մասին ընդունեցէք մեր հրապարակաւ շնորհակալութիւնները։

ԱԽԼՑԽԱ. — ՄԵԾ. Ե. Վ. ՄԽԾԱՏՈՒՆ. — Կը խնդրենք մեզ իմացընել Ձեր չստացած պրակներու թիւերն։ Երկրորդ անգամ նորէն կը ղրկենք։



digitised by A.R.A.R.@